



“ԹՈՂ ՏՈՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ Լ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ 1, 1901

ԹԻՒ 8

ՀՆՈՒՌ ԲԱԶՄՈՒԹԵՆԷ ԵՒ ԱՂՄՈՒԿԷ

Մարդկային ընկերութիւնը կեանքի մեծ միջոցարուածիւններէն մէկն է, և մինչև իսկ եղբմի բոլոր գեղեցիութիւններուն և հրճուանքներուն մէջ Աստուած ըսաւ, “Աղէկ չէ որ մարդը մինակ ըլլայ:” Բոլոր պատիժներուն մէջ որ մարդուս կրնան տրուիլ, բաց ի մահէն, ամէնէն սաստիկը կը համարուի բռնի մեկուսացումը: Մինչև անգամ ճգնաւորները, որ ընտրած են միայնակ ապրիլ, սխալ գաղափարով մը թէ այդ կերպով զԱստուած կը հաճեցընեն, ընդհանրապէս ընտանի կենդանիներու կը շտային այն համակրանքները զորոնք Աստուծոյ նպատակն է որ մարդիկ տածեն իրենց ընկեր մարդոց հանդէպ: Եւ մեծ քաղաքներու բնակիչներէն շատերուն համար հմայիչ բան մը կայ քաղաքին ազմուկին և ժխորին մէջ, այնպէս որ անոնք գեղջուկ և միայնակ կեանքը ձանձրալի կը գտնեն ժամանակ մը ետքը, և կը փափաքին նորէն քաղաք գառնալ: Բայց ուրախ ենք որ աշխարհ չէ ամբողջ մեծ քաղաք մը, վասն զի մեր կեանքերուն մէջ կու գան ձանձրութեան ժամանակներ, երբ ունէ ուրիշ բանէ աւելի հանդարտութեան և բնութեան հետ հաղորդակցելու կը փափաքինք: Կը բաղձանք թուշի երթալ հեռուն բոլոր աշխատալից տեսարաններէն և մարդոց ամէն խումբերէն, և հանգչիլ այնպէս առանձին տեղ մը



ինչպէս կը տեսնուի նախորդ երեսի պատկերին մէջ, ուր գեղեցիկ եղջերուներ և ուրիշ կենդանիներ կրնան թափառել ապահովութեամբ: Ով որ երբեք պարտած չէ անտառներու մէջ, լեռներու վրայ և լիճներու եզերքները, չգիտեր թէ Աստուած ի՞նչպէս գեղեցիկ ստեղծած է աշխարհս:

—→→→→→

ՊԱՐՏԵՂԻՆ ԳՐԱՆ ԲՈՎԻ ՈՒՍՏՐ

Կան պատանիներ որ չեն ուզեր խմուռք չգործածելու ուրիշ ընել: Ըստելով թէ առիկա ինքզինք սանձի տակ դնել է: Բայց յաջողակ վաճառական մը, որ շատ տարիներ առաջ իր վէրմանի թունէն մեկնեցաւ, փորձառութիւնովը հասկցաւ թէ իրողութիւնը ատոր հակառակն է: Մարդը սապէս ըսած է իր կեանքին վերջին օրերուն մէջ:

Ես մանկութեանս ատեն գիրքեր կը կարդայի Ովկիանոսին և անոր վրայ նաւարկող նաւերու վրայով, և իմ մէջ սաստիկ փափաք մը եկաւ նաւաստի ըլլալու: Ուստի սրտեցի որ երբ մեծ նամ, ծով երթամ: Վերջապէս եկաւ ժամանակը, երբ մօրս ընդդիմութեան հակառակ և յետոյ անոր հաւանութեամբ կարգադրութիւններ եղան ինծի համար, որ ես Նիւ Եորքէ մեկնող նաւի մը մէջ նաւաստի ըլլամ: Լաւ կը յիշեմ այն առաւօտը, երբ մեկնեցայ բլուրին կողին վրայ եղող մեր տնակէն, իմ բոլոր ունեցած քիչ մը բաներս ծրարի մը մէջ ամփոփած և ձողէ մը կախած, զոր ուսիս վրայ պիտի կրէի: Մայրս հետս եկաւ մինչև պարտէզին դուռը և հոն համբոյրներով երթաւ բարով ըսաւ ինծի: Ես ճամբէն վար իջայ: Շամբուն վրայ մինչ անկիւնէ մը անցայ, ետ նայեցայ, անգամ մըն ալ տեսնելու համար մեր տնակը: Մայրս տակաւին կայնած էր դուռը: Բնազդումով մը նորէն ետ դարձայ, անգամ մըն ալ համբուրել զանիկա: «Խոստացիր ինձի, որ դուն երբեք պիտի չհայհոյես, բաղդ պիտի չխաղաս և պիտի չխմես:» Եւ ես խոստացայ անոր և խոստումներս կնքեցի համբոյրով մը, մինչ արցունքները վար կը վազէին անոր այտերէն և կը լաւառնուէին իմ արցունքներուս հետ: Անկէ ի վեր շատ տարիներ անցած են: Շատ անգամ չըջան կատարեցի աշխարհիս բոլորտիքը: Նաւար-

կեցի դէպ ի ջինաստան և ճարոն և Ովկիանեան կղզիները: Շատ անգամ սաստիկ փորձուեցայ ուխտիս դէմ գործել, բայց Աստուծոյ օգնութիւնովը երբեք կտարած չեմ մօրս ըրած ուխտս: Հիմա ծերացած եմ, շատ նաւեր ունիմ, և հարուստ կը սեպուիմ, բայց ամէն ինչ որ ունիմ և ամէն ինչ որ եմ, կը պարտիմ, Աստուծոյ շնորհքով, այն ուխտիս զոր մօրս ըրի պարտէզին դրան առջև:

—→→→→→

ՀՈՒԹԱՅ ԵՒ ՆՈՅՄԻ

Հուովայ փորձիկ գիրքը Հին Կտակարանի մատենագրութեան մէջ գրուած ամէնէն հմայիչ գրուածներէն մէկն է: Բենիամինեաններուն կոտ-



թաս՝ հոն պիտի երթամ, և ուր որ մնաս՝ հոն պիտի մնամ. քու ժողովուրդդ իմ ժողովուրդս ըլլայ, ու քու Աստուածդ իմ Աստուածս ըլլայ. ուր որ մեռնիս՝ ես ալ հոն պիտի մեռնիմ ու հոն թաղուիմ:» Հասարակ սէր չէր Հուովի սէրը որ անոր թողուլ տուաւ իր բնավայրը և ժողովուրդը խեղճուկ ձեր կնոջ մը համար: Եւ ինք վարձատրուեցաւ: Ոչ միայն ընդունեց Նայեմիի երախտագիտութիւնը, հապա՛ սէրն ու համարանքն ալ Բոոսի, որ իսրայէլի մէջ ամէնէն ազնիւ մարդոց մէ մին էր: Հուովի յուսախարութեան և տառապանքի առաջին տարիներուն յաջորդեց յաջողութեան կեանք մը: Անիկա Գաթի և Յիսուսի նախամայրն եղաւ, և թէ՛ Հրեաներէն և թէ՛ Քրիստոնեաներէն մշտնջենաւոր յարգանք կը վայելէ: Ամէնէն աղէկը իրեն Աստուած ընտրելն էր Եհովան, որ բացաւ իրեն համար յախտեան կեանքի և երանութեան դռները:

«ԳՈՒՆ ԻՄ ՓՆՏՈՒԱԾ ՏՂԱՍ ԵՍ»

Մարդ մը յանկարծ կայնեցաւ իր ճամբուն վրայ ծանուցումի մը առջև, որ կ'ըսէր թէ ներսը տղաք կան որոնք գործ կը փնտրուեն: Քիչ մը վարանեցաւ, բայց յետոյ մտաւ ներս: «Հոս քանի տղաք կաք,» հարցուց, «Վեց,» պատասխանը տրուեցաւ, «այսօր օդը տխուր է:» «Տղաք,» ըսաւ մարդը աչքը տղոցը վրայ պարտաւրջնելով, «կարծեմ գիտէք թէ վարժուած չունեքու հանդէս պիտի տրուի այս գիշեր:» Տղոց դէմքերէն հասկցուեցաւ թէ աւնոնք կատարելապէս տեղեակ էին այդ բանին, և թէ մինչև անգամ կրնային մարդուն տեղեկութիւններ ալ տալ հանդէսին մանրամասնութիւններուն վրայով: «Լաւ ուրեմն,» ըսաւ մարդը, «ես տղայ մը կը փնտրեմ որ կոյր մարդու մը տեսնել տայ այն հանդէսը:» Տղոց առաջին պատասխանն եղաւ կէս ծիծաղ մը: յետոյ այլևայլ բաներ ըսին, թէ կոյր մը ի՞նչպէս կրնայ տեսնել, մեզ կը ծագրես, այնպէս չէ: «Ես կատակ չեմ ընել, լուրջ կը խօսիմ,» ըսաւ Մը: Տէյվիս, և յետոյ նայելով տղոցմէն մէկուն վրայ, որ բան մը ըսած չէր, հարցուց անոր, «Ի՞նչ կը խորհիս ըսածիս վրայ:» «Կարծեմ ես կրնամ,» պատասխանեց տղան: «Ի՞նչպէս պիտի կրնաս տեսնել

րածին պատմութեան և բոլոր միւս արիւնշաղախ տեսարաններէն, որոնք կը պարզուին Գատառոբայ Գիրքին մէջ, անցնիլ ընտանեկան սիրոյ և երջանկութեան այս պատմութեան, նման է նստելու անտառի ծառերու զովաւոր շուքին ներքև և կաղդուրիչ աղբիւրէ մը խմելու, արևին տոչորիչ ճառագայթներուն ներքև որ մը անցընելէ ետքը: Գիրքը կը սկսի սովի և սուգի ցաւագին պատմութիւնով մը, բայց ասոր միակ նպատակն է Մովսարացի Հուովի գեղեցիկ հաւատարմութիւնը և սէրը նկարագրել, Կրնայ՝ ուէ բան աւելի սրտաշարժ ըլլալ քան անոր իր կերպով ուղղած սա խօսքերը: «Իմ վրաս մի իյնար որ քեզ թողում, ու քեզմէ դառնամ. քանզի ուր որ եր-

տալ անոր:” “Իմ աչքերուս միջոցաւ, տէր իմ: Այս է միակ կերպը որ առնիկա կարող ըլլայ տեսնելու:” “Գրուած իմ փնտառած տղաս ես,” ըսաւ Մր. Տէյլիս, և կոյրին քով տարաւ զանիկա:

Հանդէսը ընդարձակ սրահի մը մէջ եղաւ. և կոյրը և անոր առաջնորդը նստանք քիչ մը մէկ կողմը, որպէս զի ոչ մէկը անհանգիստ ընէին. բայց Մր. Տէյլիս սրահին մէջ իր նստարանէն դիտէր թէ աղան կը պատմէր թէ ի՞նչ կ'անցնէր կը դառնար հոն, այնպէս որ կոյրը կրնար հասկնալ: Արդարև ոչ մէկը աւելի սրտանց ծափահարեց քան կոյրը:

Յաջորդ օրը Մր. Տէյլիս նորէն երևցաւ տղոցը մէջ, և քիչ մը խօսելէն ետքը վերակացոյին հետ, ըսաւ, “Երէկ ձեզի ամէն մէկուդ ալ աշխարհի մէջ բարձրանալու առիթ մը ներկայացաւ, բայց ձեր մէջէն մէկը միայն կարևորութիւն տուաւ անոր: Բարեկամս, կոյրը, ժամանակ մը խորհեցաւ թէ շատ հաճոյք պիտի զգար եթէ զանէր դեռ առիտ աչքեր որ իր կողմանէ տեսնէին, և այդ աչքերուն տէրը կարող ըլլար հանձարեղ կերպով տեղեկացնել իրեն ինչ որ տեղի կ'ունենար: Բարեկամս շատ հաճոյք զգաց կատարուած փորձէն: Կ'ըսէ թէ վրաստահ է որ ճիշդ իր փնտառած տղան զանուած է քաղաքին մէջ, և ինք անոր դիրք մը տուած է հիմա: Տղայ մը որ կոյրի մը տեսնել կու տայ, պարզ և մըն է:”


ՄԱՆՈՒԿՆԵՐ ՈՐ ԻՐԵՆՅ ՏԵՂԵՐԸ ԿՐ ՓՈՒԱՆԱԿԵՆ

Տանիմարքայի մէջ ընդհանրացած գեղեցիկ և շահեկան սովորութիւն մը կայ: Ամառնային արձակուրդներու միջոցին եղած կարգադրութեան մը համաձայն Տանիմարքացի մանուկներ, քաղաքացի և գեղացի, կը փոխանակեն իրենց տեղերը: Քաղաքացի ծնողքներ իրենց մանուկները գեղ կը դրկեն, և անոնց տեղը գեղացի մանուկներ կ'ընդունին: Արդիւնքն այն է որ քաղաքացի մանուկները կը զորանան և կը զուարթանան գեղի օդը և տեսարանները վայելելով, մինչ փոքրիկ գեղացիները կը վայելեն քաղաքի կեանքը և հանդէսներն ու խնճոյքները որ կը տրուին իրենց համար: Հարկաւ, անձնուրացութիւն է ծնողքներու բաժնուիլ իրենց զաւակներէն մինչև անգամ կարճ ժամանակ մը, բայց պզտիկներուն վայելած երջանկութիւնը կը

փոխարինէ այդ անձնուրացութիւնը, Մենք չենք կրնար շահ կամ վայելք ունենալ այս աշխարհին մէջ առանց անձնուրացութիւն ընելու ունէ կերպով: Ամառնային արձակուրդներու միջոցին 10,000 մանուկներ փոփէնհաւ կրնէ գեղերը կը տարուին, և 10,000 մանուկներ ալ գեղերէն փոփէնհաւկըն, Տանիմարքայի մայրաքաղաքը:

ՍՍՅՐՈՍ ՀՍՄԻՒՆ

Մարդու մը արժանիքին ամէնէն վատահիշի փորձերէն մին է զիտնալը թէ անիկա ի՞նչպէս կը նկատուի անոնցմէ՝ որոնց մէջ անցուցած է իր կեանքը, և անոր նկատմամբ ի՞նչ աստիճան սէր ու յարգանք կը զգան անոնք: Տր. Համիլին վաղեմի աշակերտները և Քողերական հասարակութիւնը



կոստանդնուպոլոյ մէջ և շրջակաները, որոնց համար անիկա իր կեանքին լաւագոյն տարիները նուիրեց անխնայ, կը վկայեն թէ ի՞նչ տեսակ ազնիւ մարդ էր անիկա:

Տր. Համիլին 1893ին հրատարակեց յոյժ շահեկան գիրք մը, իր ինքնակենսագրութիւնը, որմէ կը քաղենք անոր մանկական տարիներու վերաբերեալ իրողութիւններ:

Տր. Համիլին ծնաւ 1811 Յունուար 5ին: Իր հօր կողմանէ սերած էր Հիւլընոյէ մը, այսինքն Գաղղիացի թողտքական էր Գաղղիայէ Անգլիա փախաւ յիւրապետութիւնը, ազատ մնալու համար Լուդովիկոս ԺԳ-ի իշխանութեան ատեն հանուած հալածանքէն: Անոր երկու մեծ հայրերն ալ, այսինքն թէ՛ հօրը հայրը և թէ՛ մօրը հայրը, զինուոր էին Անկախութեան Պատերազմին մէջ, և Հէննիպալ Համիլին փոխնախագահ Լինքընի օրով, Ամերիկեան


Քաղաքական պատերազմին ատենը, անոր հօրեղբոր որդին էր:

Սայրըսի հայրը երկրագործ էր և Գրիստոնեայ անձ մը, որ ընտանեկան հոգևոր պաշտօնի կ'առաջնորդէր ամէն օր: Մեռաւ երբ որդին Սայրըս տակաւին պատանի էր, և այդ ժամանակէն արտին հոգը ինկաւ Սայրըսի և անոր եղբոր վրայ որ երկու տարի մեծ էր անկէ: Բայց Սայրըս իր հօր մեռնելէն առաջ նշանաւոր սէր ցուցած էր գործիքներու համար, և հանճար՝ զանոնք գործածելու մէջ, և յետոյ ինք և իր եղբայրը երկրագործութեան մէջ գործածուած շատ մը գործիքներ շինեցին:

Այդ ժամանակէն քանի մը տարիներ առաջ մանուկն Սայրըս ուրիշ ընտիր յատկութիւններ ցուցած էր, որոնք մնայուն եղան յետագայ տարիներուն մէջ: Անգամ մը, երբ չորս տարեկան էր, սանդուղէ մը վար ինկաւ, և բաւական վնասուեցաւ, բայց իր հօր գործաւորներէն մէկը մխիթարեց զանիկա և անոր կտոր մը մեղր տուաւ, և ըսաւ թէ Եօզի պիտի տայ եթէ նորէն ինչայ: Մեղրը նորէն ստանալու համար այդ օրը յատուկ երկու անգամ ալ ինկաւ, և վիրաւորուեցաւ ու ճմուռեցաւ մարմինը: Տօնախմբութեան օր մը մայրը 70 փարա տուաւ որպէս զի ծախսէր իր զբօսանքին և վայելքին համար, բայց ըսաւ նաև որ 10 փարան միսիոնարական գանձանակը ձգէ: Ամբողջը ձգեց միսիոնարական գանձանակը և իրիկունը շատ անօթեցած դարձաւ տուն:

Արտը երկու եղբայրներուն ալ բաւական ըլլալու չափ մեծ չէր, ուստի Սայրըս 16 տարեկան հասակին մէջ մօտակայ փորթընտ քաղաքը դնաց սովորութիւն սորվելու համար: Հոն ալ ցուցուց իր հնարիմաց նշանաւոր կարողութիւնը: Տր. Փէյսըն հանրաժանօթ եկեղեցականին ազդեցութեան ներքե ինկաւ ան, և առաջնորդուեցաւ իր սիրաբ Գրիստոսի տալու և եկեղեցին մտնելու 17 տարեկան հասակին մէջ: Նաև երեկոյեան դպրոց մը կ'երթար: Շատ բան կարդացած էր իրենց տան մէջ երբ տղայ էր, և իր ինքնակենսագրութեան մէջ կ'ըսէ թէ կրնար իր հօր գրատան մէջի ամէն մէկ գիրքը յիշել: Երեկոյեան դպրոցին մէջ առաջին մրցանակ առաւ ճառի մը համար, և բարի սարկաւազ մը խորհուրդ տուաւ անոր որ Աւետարանի պաշտօնէութեան համար ուսանի: Առաջին անգամ դէմ կեցաւ. բայց

եկեղեցին որուն կը պատկանէր ան, դարմական օգնութիւն ըրաւ անոր, և ուստի 18 տարեկան հասակին մէջ սկսաւ իր ուսումները: Բնթացաւ արտի վկայական ընդունեց գոյէճէ 1824-ին, և Աստուածաբանութիւն սորվելէ ետքը այս երկիրն եկաւ 1838ին: Անոր յիշեալ գիրքին մեծագոյն մասը կը պարունակէ Պէպէքի ճեմարանին հետ ունեցած իր կապակցութիւնը մինչև 1860, երբ որոշուեցաւ որ ճեմարանը Մարսուան փոխադրուի, և Բոպէթթ Գոյէճը հիմնարկելու համար իր ջանքերն ու աշխատութիւնը, որուն տնօրէնն եղաւ մինչև 1877, նաև իր վերջի կեանքը Ամերիկայի մէջ, նախ իբրև Աստուածաբանութեան փրօֆէսոր, յետոյ իբրև Գոյէճի տնօրէն, և այնուհետև իր մեկուսացումը որ ժրջան գործունէութիւն մըն էր խօսելու և գրելու: Տր. Համլին մեռաւ ներկայ ամսէս ճիշդ տարի մը առաջ, 90 տարեկան:



ՏՊԱԳՐԻՉ ՏՂԱՆ

Իբր 1725ին, Ամերիկացի տղայ մը, գրեթէ 19 տարեկան, Լոնտոն գրաւորուեցաւ, ուր ստիպուած էր իր հացը ճարել: Ան չէր նմաներ մեր օրերու այն շատ մը տղոց, որոնք կը թափառին հոս ու հոն, գործ փնտռելու համար, և յօժար են ունէ գործ ընել, վասն զի բան մը ընել չեն գիտեր: Բայց այս տղան սորված էր գործել, գիտեր թէ ո՛ր երթալու էր գործ գտնելու համար: Ուստի շիտակ տպագրատուն մը գնաց և գործ խնդրեց: «Ուրկէ՞ էք», հարցուց տեսուչը: «Ամերիկայէ՛», պատասխանեց տղան: «Ո՛հ», ըսաւ տեսուչը, «Ամերիկայէ՛: Ամերիկացի պատանի մը գործ ուզէ իբրև տպագրիչ: Գրաշարութիւն կըրնա՞ք ընել»: Պատանին քալեց դէպ ի գրի տուփերը, և կարճ միջոցի մէջ հետևեալը շարեց Յովհաննու Աւետարանին առաջին գլխէն. «Եւաղարեթէն կարելի՛ է որ աղէկ բան մը ըլլայ. ըսաւ անոր փրկիչպոս, Եկուր ու տես»: Պատանին այնպէս արագ, այնպէս ճիշդ ըրաւ գործը, և փափուկ յանդիմանութիւն մ'ալ ուղղած եղաւ այնպէս պատշաճ և այնպէս զօրաւոր, որ անմիջապէս ազդեցութիւն և դիրք տուաւ իրեն՝ ամբողջ տպագրատան մէջ: Ան իր արհեստին մէջ ժրջանութեամբ աշխատեցաւ, մերժեց խմել գարեջուր կամ ոգեկից ըմպելի, ստակ աւելցուց, Ամերիկա վերադարձաւ, եղաւ տպագրիչ, հրատարակիչ, հեղի-

նակ, նամակատան ընդհանուր պաշտօնէայ, Երեսփոխանական Ժողովի անդամ, ստորագրող Ամերիկեան Անկախութեան Յայտարարութեան, դեսպան արքունի պալատներու, և ի վերջոյ մեռաւ Ֆիլատեթիոյ մէջ 1790 Ապրիլ 17ին, 84 տարեկան, տարիքի և պատիւներու լեցունութիւնով: Եւ հիմա 150 է աւելի քաղաքներ և գեղեր կան Ամերիկա, որ այս տպագրիչ տղին, Բենիամին Ֆրանքլինի, անունով կը կոչուին:



ԼՈՒՆ ԱՋԳԵՑՈՒԹԻՒՆ

Ասկէ քառասուն տարիներէ աւելի առաջ Անգղիական մեծ դպրոցի մը ընդարձակ ննջարաններուն մէջ ոչ մէկ տղայ կը համարձակէր ըսել իր ազօթքները: (Բանն այսպէս էր այդ օրերը ամէն տեղ): Գալոց եկաւ դեռատի տղայ մը, որ ոչ զօրաւոր էր, ոչ նշանաւոր, ոչ փայլուն, ոչ աղքեցիկ և ոչ բարձր դասակարգէ: Առաջին գիշերը որ քնացաւ ննջարանին մէջ, ոչ մէկ տղայ ծունկի վրայ եկաւ իր ազօթքն ըսելու համար: Բայց նոր տղան ծունկի վրայ եկաւ, ինչպէս ըրած էր միշտ: Տղան ծաղրուեցաւ, նախատուեցաւ, ձեռքերու և ոտքերու հարուած ընդունեց ատոր համար: Եւ այսպէս եղաւ յաջորդ գիշերը և յաջորդ գիշերը: Բայց մէկ երկու գիշեր ետքը ոչ միայն դադրեցաւ հալածանքը, այլ ուրիշ տղայ մըն ալ ծունկի վրայ եկաւ անոր պէս, և յետոյ ուրիշ մը, մինչև որ ամէն մէկ տղի սովորութիւն եղաւ գիշերները ազօթելու համար ծունկ չըլլել իր անկողինն քով: Այդ ննջարանէն, ուր այս պատմութիւնն ընողը կը գտնուէր, սովորութիւնը տարածուեցաւ ուրիշ ննջարաններու մէջ ալ, մէկիկ մէկիկ: Երբ այն դեռահասակ նոր տղան եկաւ դպրոց, տղոցմէն ոչ մէկը կ'ըսէր իր ազօթքը. երբ մեկնեցաւ դպրոցէն, առանց անոր կողմանէ արարքի մը կամ բառի մը, բայց միայն հանդարտ և քաջ օրինակի լռին ազդեցութեամբ, բոլոր տղաք կ'ըսէին իրենց ազօթքները: Ուղիղ գործը յաղթանակ կանգնած էր այն փոքրիկ աշխարհին վատ սովորութեան վրայ: Բանի մը ամիս առաջ սոյն փոքրիկ պատմութիւնը հրատարակուեցաւ, և քիչ յետոյ հետևեալ երկատր ընդունուեցաւ, որ պատմութիւնը աւելի հետաքրքրական կ'ընէ. «Կարծեմ ամէն անոնք որ կարդացին 'Լոին Աղքեցութեան' պատմութիւնը, գիտնալու են թէ այն տղան որ համարձակեցաւ ը-

սել իր ազօթքները, էր Արթուր Փ. Սթենլի, յետոյ Ուէսթմինսթըրի Գահերէցը, համբաւաւոր 'Տին' Սթենլի»:



ՆԱԽ ՄԱՐԴ ԸԼԼԱԼ ՈՐՈՇԵՑԷՔ

Չափահաս անձերու մէջ գտնուող փոքրիկ տղու մը հարցուեցաւ թէ ի՞նչ ըլլալ միտքը դրած է երբ մեծնայ: Տղան անմիջապէս պատասխանեց, «Մարդ»: Եւ հոն գտնուողները ամէն ալ խնդացին տղին վրայ: Եւ սակայն կարծեմ տղան շիտակ խօսեցաւ: Կ'ուզենք որ բոլոր տղաք ալ իմաստուն ըլլան իրենց որոշումներուն մէջ: Անոնցմէ ոմանք միտք ունին երաժիշտ ըլլալ, կամ վաճառական, երկրագործ և կամ հրապարակագիր: Անոնց շատը կ'ակնկալեն յաջողիլ և ստակ դիզել: Բայց միայն պատահական տղայ մը ամենէն առաջ կը դասէ մեծագոյն բանը և միտքը կը դնէ ամէն բանէ առաջ մարդ ըլլալ: Աշխարհս պէտք ունի աղէկ բժիշկներու, վարպետարհեստաւորներու, համեստ մտաւճառներու և հացագործներու, և ուղղամիտ փաստաբաններու, բայց ամէնէն աւելի պէտք ունի մարդերու:



ՏԱՍԸ ՓԱՐԱՆԵՐՆ ԼՆՁՊԷՍ Կ'ԱՃԻՆ

Տասը փարաները պզտիկ արժէք ունին կ'երևնայ, բայց եթէ քանի մը անգամ կրկնապատկուին, զարմանալի գումարի մը կը հասնին: Աղջիկ մը իր հօրը յանդուգն խոստմունք մը ընել տուաւ, գիտնալով այս իրողութիւնը: Համեստութեամբ առաջարկեց իր հօրը որ օր մը իրեն 10 փարա տայ, և աւմիս մը շարունակէ ամէն օր նախորդ օրուան կրկինը տալու պայմանաւ: Եւ խօսք տուաւ որ այնուհետև իր հօրմէն բնաւ ստակ պիտի չուզէ կեանքին բոլոր օրերուն մէջ: Հայրը առանց մտածելու խօսք տուաւ իսկոյն: Բայց երեսներորդ օրը աղջիկը պահանջեց սա պզտիկ գումարը. 134,217,728 դահեկան: Թող մեր դեռահաս ուսանողները, որ մաթիմատիքի ճաշակ ունին, հաշիւ ընեն թէ արդեօք շիտակ է այս գումարը:

Տարեկան բաժանորդագին՝ 6 դահ. արծաթ, կանխիկ, ամէն տեղուր համար:

Ամերիկայի Միտինարաց Ընկերութեան կողմէն Արտոնատէր Ճ. Բ. ԿԻՒՆ Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊՍՐՆԸՄ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՌԱ ՊՅՅԱՅԱՆ
Ֆինանսները Եօզուլու, Ամերիկան Խան